



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԿԵՐԱՆՈՐՈԳԵԱԼ Ս. ՔԱՂԱՍՍԻՑ ՄԱՆԿԱՎՅ ԵԿԵՂԵՑԻՑ ՕՐՅԱՆԻԹԻՒԾ ԿԱՏԱՐԵԼՈՎ

**ՓՈԹՈՐԿՈՏ ԱՃԽԱՐՅԻ ՄԵԶ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՅՆ ՆԱԽ Է,  
ՈՒՐ ՔՐԻՍՏՈՍ ԿՈՒ ԳԱՅ ԽԱՂԱՐՈՒԹԻՒՆ, ՔԱՒՈՒԹԻՒՆ,  
ՍԵՐ, ԾԵՈՐՅՔ ԵՒ ՕՐՅԱՆԻԹԻՆ ՊԱՐԳԵՒԵԼՈՒ**

ԸՆԱԴ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ

Տօնական մթնոլորտ եւ եռուգեռ կը տիրեր Օրէնք քառունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ շրջափակին մէջ, Կիրակի, 28 Յունուարի առաւոտուն։ Արդարեւ ծխական համայնքը, գլխաւորութեամբ եկեղեցւոյ Յոգեւոր Յովիլ՝ Արք. S. Յրանդ Քինյ Երեցեանի, հոգաբարձութեան, Երեսփոխանական կազմին, Տիկնանց Միութեան եւ յարակից քոյր կազմակերպութիւններու եւ եկեղեցասէր ազնիւ բարերարներու, ճեռք ճեռքի տուած, յաջողապէս ամբողջացուցած էին վեց ամիսներ առաջ սկսած եկեղեցւոյ վերանորոգութեան տեսդագին աշխատանքները եւ այժմ, անձկագին կը սպասէին օրինութեան եւ վերընծայման պատարագին։

Թեմիս Բարեցան Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսաւոր Ս. եւ անմահ պատարագ մատոյց վերանորոգեալ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ։ Առաջնորդ Սրբազնին կ'ընկերանային Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. S. Եփրեմ Արք. Թապագեան, իսկ Գերպ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Յոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ S. Յրանդ Քինյ. Երեցեան որպէս առընթերակայ՝ Ս. Խորանին սպասարկեցին։

Քարոզէն առաջ, պատարագիչ Սրբազն Յայրը, ընկերակցութեամբ հոգեւորականաց դասուն եւ սարկաւագներուն, մոմակիր եւ քշոցակիր դպիրներուն, «Ուրախ Լեր» շարականին առաջնորդութեամբ, խորաննեւ եկեղեցւոյ դասը իշնելով եւ խնկարկելով՝ սկսաւ եկեղեցւոյ օրինութեան եւ վերընծայման յատուկ արարողութեան եւ անդաստանին։

Առաջնորդ Սրբազնը եկեղեցւոյ չորս կողմերը օրինեց եւ վերընծայման գոհաբանական յատուկ աղօթք արտասանեց։ Երկիւղած հոգեւոր մթնոլորտի մէջ, աղօթասաց ալիքներ սիրտ սիրտ կը ներթափանցուիին, եւ վեհասլաց ուխտի աղօթք ու աղաչանք մրմունչի վերածուելով՝ խնկաբոյր եկեղեցւոյ կամարներուն ներքեւ հաւատքի կայծերով կը հրդեհեին հաւատացեալներու սրտերը, ուրախութեան արցունքներով կը տամկացնեին անոնց աչքերը։

«Այսօր հաւատքի վերահաստատման, վերածնունդի, վերափոխման ուխտի եւ առ Աստուած օրինութիւն եւ գոհութիւն վերառաքելու օր է», յստակ ու ջինջ բառերով

պատգամեց Առաջնորդ Սրբազնը: Արդարեւ, Ս. Զառասնից Մանկանց Եկեղեցւոյ ծխական համայնքը իր Հոգեւոր Հովհանով, Հոգաբարձական Եւ Երեսփոխանական կազմերով, տիկնանց Եւ յարակից միութիւններով Եւ կազմակերպութիւններով անցեալ վեց ամիսներու ընթացքին սրտեռանդ ու անդուլ աշխատեցան Եւ Եկեղեցւոյ վերանորոգութեան, վերաշինութեան աշխատանքները իրենց ցանկալի աւարտին հասցուցին, ըսաւ պատարագիչ Առաջնորդ Սրբազն Հայրը Եւ աւելցուց, թէ այսօր, ահաւասիկ հոգեկան անհուն բերկրանքով սուրբ Եւ անմահ պատարագ կը մատուցանենք Եւ առ Կստուած գոհութիւն Եւ փառք կու տանք, որ աղօթքի այս տունը աւելի գեղեցկացած ու պայծառացած Կստուծոյ ընծայաբերուի, որպեսզի իր անունը փառաւորուի Եւ Անոր սուրբ խորանեն հաւատք, լոյս, յոյս, շնորհը Եւ օրինութիւն առատաբաշխ տեղան Եւ հրաշազարդեն մեր հաւատացեալ ժողովուրդի անհատական, ընտանեկան թէ հաւաքական կեանքերը:

Սրբազն Հայրը մէջբերում կատարեց օրուան ճաշու Վւետարանի (Յովի. 2. 16-21) համարները, ուր կը նկարագրուեր թէ ինչպէս առաքեալսեր, փոթորկոտ ծովուն վրայ ահարեկ Եւ սրտատրով կը նաւարկեին, յանկարծ տեսան Յիսուսը, որ ծովուն վրայէն դեպի իրենց կը յառաջանար՝ քաջասրտութիւն, յոյս, ապահովութիւն Եւ խաղաղութիւն պարգեւելու, ըսելով՝ Ես Եմ, մի վախնաք: Այդպէս Ենաեւ Եկեղեցւոյ դերը Եւ առաքելութիւնը այս աշխարհի ալեկոծ ու մեղաց ծովուն վրայ, երբ որպէս անհատ ու համայնք՝ Եկեղեցւոյ ապահովութեան, շուքին ու հովանիին ներքեւ պատսպարուած կ'ապրինք ու մեր կեանքերէն ներս կ'ընդունինք Ջրիստոսը, որ խաղաղութիւն, մեղաց քաւութիւն Եւ օրինութիւն կը պարգեւէ, ըսաւ Առաջնորդ Սրբազնը: Ան գնահատական ու քաջալերական խօսքերով Վեր առաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովի Արք. Տ. Յանդ Թիև. Երեցեանի, ժրաշան հոգաբարձութեան, Երեսփոխաններուն, ազնիւ նուիրատուններուն ու Եկեղեցւոյ վերաշինութեան աշխատանքներուն նպաստող հին թէ նոր բոլոր բարերարներուն զոհաբերող, աստուածահանոյ Եւ Եկեղեցանուեր ծառայութիւնները՝ յանուն Ս. Զառասնից Մանկանց Եկեղեցւոյ պայծառութեան, ծխական համայնքի վերաշխուժացման Եւ հոգեւոր շինութեան: «Սրբազն Եւ գեղատեսիլ այս աղօթատեղին՝ Կստուծոյ տունը գեղեցկացուցիք ու պայծառացուցիք, շատ ապրիք, սակայն անհրաժեշտ ու շատ կարեւոր է, որ Եկեղեցւոյ ու համայնքային կեանքի բոլոր բնագաւառներէն ներս որպէս հոգեւոր կենդանի Եկեղեցի՝ ձեր գործօն մասնակցութեամբ շունչ ու կեանք տաք այս նիւթական շքեղ կառոյց Եկեղեցւոյ», շեշտեց ան:

«Ձեր զաւակները հայկական վարժարան, կիրակնօրեայ դպրոց ուղարկեցէք: Սուրբ գրային թէ հոգեւոր բնոյթի դաստիարակչական ծրագիրներու թող մասնակցին: Պատասիներ ու Երիտասարդներ սուրբ խորանին թող ծառայեն ու դպրաց դասին անդամակցին: Թող հայ Եկեղեցին որպէս հոգեւոր մկրտարան՝ կենսագործէ, հրաշակերտէ, մայուն ներկայութիւն դառնայ Եւ օրինութիւն բաշխէ: Եկեղեցւոյ ու Ջրիստոսի ապաւինելով՝ մեր կեանքերը կը խաղաղին: Ջրիստոս մեր մէջ հրաւիրելով Ե որ մեր մեղքերը կրնան քաւուիլ, իրարու ներելով, զիրար զօրացնելով Ե որ բոլոր տեսակի անհասկացողութիւնները կրնան չքանալ, Եւ շինարար, համերաշխ գործակցութեամբ կարելի կ'ըլլան շրջանցել մեր անհատական թէ հաւաքական բոլոր տեսակի մարտահրաւերները», Եզրափակեց Առաջնորդ Սրբազնը:

Սուրբ Պատարագի աւարտին, Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կազմակերպութեամբ «Դուկասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն: Ազգ. Առաջնորդարանի Ջրիստոնեական Դաստիարակութեան

Գրասենեակի վարիչներէն՝ Գերապ. Միւռոն Ծ. Վորդ. Ազնիկեան, Եկեղեցւոյ Յովհիւր, Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան Եւ Առաջնորդ Սրբազան Յայրը անգամ մը եւս կոչ ուղղեցին Ներկայ հաւատացեալներուն, որ աշխուժ եւ սրտեռանդ, վերանորոգ յանձնառութեամբ Եկեղեցւոյ հոգեւոր թեւերուն Ներքեւ համախմբուին, վերանորոգեալ ու պայծառացեալ Ս. Զառաւսնից Մանկանց Եկեղեցւոյ՝ հոգեւոր այս տան նոր շունչ, կեալը ու եռանդ տան Աստուծոյ փառքին, հաւատացեալ եւ հաւատաւոր մեր ժողովուրդի ծառայութեան ու նոր սերունդի հոգեւոր շինութեան ի խնդիր:

**DURING THE BLESSING OF THE RENOVATED FORTY MARTYRS CHURCH**

**IN THIS TURBULENT WORLD, THE CHURCH IS THE VESSEL  
THROUGH WHICH CHRIST GRANTS US HIS BLESSINGS**

*DECLARED THE PRELATE*

On Sunday, January 28, faithful parishioners of Forty Martyrs Church in Orange County gathered to witness and participate in the blessing of the renovated church. The task of renovation was completed over the course of six months. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass and the blessing of the church, assisted at the altar by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, and parish priest Rev. Hrant Yeretsian. H.E. Archbishop Yeprem Tabakian also participated in the ceremony.

Prior to his sermon, the Prelate, accompanied by clergy members, deacons, and acolytes, conducted the blessing and rededication of the church.

In his sermon the Prelate stated: "Today is a day for reaffirmation of faith, for rebirth, for transformation, and for giving thanks to Almighty God for His blessings." The Prelate then spoke on of the day's Gospel quoting from John 6:16-21 which describes how, as the disciples were fearfully navigating their boat in the storm, they saw Christ approaching them to grant them courage, hope, security, and peace. This is also the role and mission of the church in this stormy world, through which Christ grants us peace, atonement for our sins, and His blessings.

The Prelate subsequently expressed his appreciation to Rev. Hrant Yeretsian, Board of Trustees, Delegates, donors and sponsors for their service and contributions to the betterment of the church and parish community, asserting: "You have contributed to the beautification of the church, however it is crucial that you bring your physical participation to all aspects of church and community life, to breathe new life into the church." He concluded by adding: "Send your children to Armenian school and to Sunday School. Let them participate in Bible studies or other spiritual education programs. Let our youth serve at the altar or as members of the choir. May the Armenian Church have a constant presence in our lives. By placing our faith in Christ and our church our lives become more peaceful and meaningful. It is only by inviting Christ into our lives that we can have expiation of our sins. It is only by forgiving each

other and by supporting each other that misunderstandings resolve and make room for collaboration which can overcome any obstacle in our individual and collective lives."

Following Mass, a reception took place at "Gugasian" Hall organized by the parish Ladies Auxiliary.